Լեռ Կամսար

Հայաստանն ու Վրաստանը կեչի ծառին տակ

Պոլսո զբոսավայրերեն մեկուն մեջ խոշոր կեչի մը կա բուսած: Այդ կեչիին տակ ամեն օր ժամը 12-ին ատենները ամեն անցորդ կնկատե երկու ժամանակե առաջ ծերացած մարդոց, որոնք տխրամած դեմքով, կռնակը ծառին հենած կխոսակցեն իրար հետ:

Ատոնցմե մեկը բոլշևիկներեն ճողոպրած Վրաստանն է, մյուսը՝ Հայաստանը:

-Նու դաա՛, - ըսավ Հայաստանը, մաշված կաշի մը փրցուց կոշիկին տակեն ու Վոսփորը նստեց:

-Դաաա՛... - կրկնեց Վրաստանը և տիրեց լռություն:

-Բայց կացո՛, խոսքը մեր մեջ, շատ հանդուգն էիր հանդեպ Ռուսաստանը: Ջանըմ, ինչքան չըլլա Ռուսաստան է, 150 միլիոն, դուն այծ ու ոչխար իրար վրա միլիոն մընալ չկաս, ու ելլել անոր դրոշակը պատռել, ձեռնոց նետել և սպառնալ, վայ քեզի սանկ կընեմ, նանկ կընեմ: Ես միշտ փիղն ու քոթոթը կմտաբերեի:

-Մի մեղադրիր, դրացի, բոլորը Անգլիան ըրավ: Ա՛խ այն Անգլիան... Անգլիա բառին վրա Հայաստանն ալ «ա՛խ» քաշեց:

-Երևակայե՛, դրացի, - շարունակեց Վրաստանը, կըսեմ կվախնամ վերջնագիր տալու. կըսե մի վախնար, խիստ խոսե, քո մազին վնաս չի գար, Տաճկաստանը քո կռնակն եմ դրեր, իսկ կողքդ Հայաստան: Ծովեն Ֆրանսիան կօգնե, Ռուսիո սանկ կընենք, նանկ կընենք: Խի՛ստ խոսե: Ես ալ անսալով իրեն, խիստ խոսեցի

ու վերջնագիր տվի՝ բարով խերով չտայի ու այս օյինը եկավ գլխուս:

-Խե՛ղճ դրացի: Կոշիկիդ մե՞կը ուր թողիր:

-Բաթում, նավ մտնելուս մեկ ոտքս դեռ ցամաքեն չքաշած՝ թշնամին հանեց ոտքես:

-Լավ ես պրծեր:

-Գոհություն Աստուծո:

-Ոտաբոբի՞կ պիտի գնաս Լոնդոն:

-Չէ, Ֆրանսիան զույգ մը հնամաշ կոշիկ է ղրկեր, - ըսավ Վրաստանը ու կամաց մը մատը դրավ ծունկն ի վեր ելլող ոջիլին վրա:

-Ո՞ւր կպառկիս, - հարցուց Հայաստանը:

-Ահմետ Սիլիմին խանը: Կեղտոտ տեղ է: Դո՞ւն:

-Ես մեր պատրիարքարանը, Սրբազանին նախասենյակը:

-Երեկ պատրիարք հայրը ուշ եկավ պառկելու և գիշերն 18 անգամ դուրս գնաց. անշուշտ առաջի իրիկուն ֆրանսիական դեսպանին քով տմարս բաներ կերած պիտի ըլլար:

-Է՛խ, է՛խ...

Տիրեց լռություն:

-Զանըմ, սուտ է, որ կըսեն աշխարհիս մեջ արդարություն կա, հանուն ազգային քաղաքակրթության կճառեն, մանր ազգերու բարօրության մասին կխորհին եղե՛ր: Ո՛հ, կացո՛, սուտ բաներ են ասոնք, սուտ, մի հավատար այդ լիրբ խոզերուն... Ոտքիդ տակ շապիկի կոճակ մըն է ինկեր՝ վերցուր պետք կուգա քեզի:

-Ես ալ չէի հավատար, բայց հիմա մեր հարցն արդեն ուրիշ է, մեր դատն ալ համազգային է դարձեր: Սևրի դաշնագիրը ունենք, - վրա բերավ Հայաստանը ու ծռեցավ կոճակը վերցնելու գետնեն:

-Տուփդ տուր, սիկար մը փաթթեմ:

-Տուփս երեկ ծախեցի մեկ մեջիտի:

-Դա՛, շատ դժվար է. մեթալիկ մը չկա քովս:

Տիրեց լռություն:

-Յանի, կացո՛, - սկսեց Հայաստանը, - դուն ալ մեկ դրացիություն մը չըրիր ինձի...

-Ինչո՞ւ, ինչ ըրի քեզի որ:

-Ի՞նչ ըրիր... 1918-ին Կովկասյան Սեյմին ատենները մեզի ձգեցիր ու Ադրբեջանին միացար...

-Է՞հ, լռե ճանըմ, հին դարդեր խառնելու ատենը չէ:

-Տաճիկներու հետ գաղտնի դաշնակցած, դավաճանորեն Կարսը հանձնեցիր...

-Ե՞րբ բաղնիք երթանք, Հայաստա՛ն:

-Դեռ փոխնորդ չունիմ... Ծալկային մեջ հայ գաղթականները սովամահեցիր:

-Գեթ ածիլվեինք, երեսս կքորվի կոր:

-...Ախալքալակն ու Լոռին ասպատակեցիք, մոռնալո՞ւ բան է:

-Ծո՛, մազերդ կարգին ճերմակեր է, Հայաստա՛ն: Վախ ձագուկ, դեռ չապրած ծերացար:

-Թիֆլիսաբնակ հայոց ահաբեկեցիր, աքսորեցիր, Բաթումի ճամփան գոցելով մեզի սովի դատապարտեցիր:

-Ինձի նայե, ինձի նայե, տես ինչ կըսեմ:

-... Մեզի Տաճիկին հետ կռվի հանեցիր ու ետևես չեզոք գոտին գրավեցիր: Դուն մատնեցիր, որ Ֆրանսիան հիսուն հազար փութ բամբակս փախցուց:

-Օ՛ֆ կացո, հոգիդ սիրես մերկնեցներ: Է ի՞նչ ընեմ, դուն ալ Բաթումի վրա էիր աչքդ տնկեր: Եվ, երթանք մեկական գավաթ տնկենք, ատոր ժամանակը չէ: Թե ունիս, քսան փարա փոխ տուր ինձի, մարգանեց եմ ծախեր, դրամ ունիմ Ֆրանսիո քով, կառնեմ կուտամ:

-Չունիմ:

-Հիմա մեր եղածն եղավ, չխոսենք, եթե Աստված հաշողեց մեր երկրին տիրացանք, անշուշտ բանն այլ կերպ կերթա: Է՛հ, երթանք: Սա ատենները սովորաբար կճաշեն մարդիկ: Երթանք նայենք ինչ կընենք:

-Ինձի նայե, կացո՛, Լոնդոն երթալուդ ավել-պակաս չխոսես իմ մասին: Հարցնեն նե՝ կըսես՝ այո, իշտե բոլշևիկները ներս մտան, մենք փախանք՝ բայց անվնաս, ըսե թող մեր մասին չմտածեն: Հա, ըսե ձեր հրացանները շատ ծանր էին, փախնելու չեն գար: Սևրի դաշնագիրն ի՞նչ եղավ: Ըսե, Հայաստանը կըսե թող շուտ ընեն, ալ համբերություն հատավ, թող շուտ բոլշևիկները Հայաստանեն հանեն, տաճիկներուն պատվիրեն հեռանալ, Ամերիկային ըսեն կաթ ու հաց պատրաստե, մեր պաշտպանության համար գունդ մը զորք: Այսքան: Չմոռանաս, ըսե կաթ և հաց:

-Չէ: Շատ աղեկ. ցը:

-Ցը: Հա, մեր Պողոսին կամ Ահարոնյանին կտեսնես նե 50 հազար փութ բամբակի մասին թող Սևրի դաշնագրի ատեն խնդիր շինե: Հակառակ պարագային գոնե ձեռք մը շապիկ-վարտիքցու տան: Կամաց Ըսե վարտիք չունիմ հագիս: Է՛հ, երթաս բարով... Կռնակդ մաքրե, ատ ո՞ւր ես պառկեր: Այդպես:

Վրաստանը մյուս փողոցը շուռ գալով, ետևը նայեցավ ու բան մը դրավ բերանը, իսկ Հայաստանը որուն քամակը բան մը կեռար, մենավոր ծառի մը տակ

քաշվեցավ, զգեստները հանեց ու սկսավ լուծել հարց մը, որ ամենայն տեսակ գաղթականի համար օրակարգի առաջին հարցը կկազմե...

1921թ.